**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

**ՈՐՈՇՈՒՄ N 348 -Ա**
**« 31 » ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2024Թ.**

**ՎԱՀԵ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու մասին» N 216-Ն որոշմամբ սահմանված թիվ 1 հավելվածի «1.Վ**արչատնտեսական մասի համակարգող՝ հանրակրթական ուսումնական հաստատության**» մասի 25-րդ կետով և հիմք ընդունելով Վահե Ղազարյանի դիմումը՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. 2024 թվականի նոյեմբերի 4-ից մինչև դեկտեմբերի 6-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «ՀՀ Վայոց ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Վահե Ղազարյանին տրամադրել 2023-2024 թվականների աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Վահե Ղազարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում նրա պարտականությունների կատարումը դնել նույն կազմակերպության տնօրենի ժ/պ Գոհար Բաբայանի վրա:
3. Աշխատանքի ներկայանալու ժամկետը՝ 2024 թվականի դեկտեմբերի 9-ին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

**Կ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

**Ք.Եղեգնաձոր**